դժբախտ երկիր, ուր հայ կանայք ողբալի վիճակի մէջ են, որոնք ոչ միայն իրենց կամքն ու ցանկութիւնը յայտնելու իրաւունքից զուրկ են, այլ և իրրև խօսուն և բանական արարածներ, բացի իրենց դաժան ամուսնուց, տան անդամների սրբական սեռի մարդկանց հետ ձայնով խօսելու իրաւունք անգամ չունին։ Տէրը մի արասցէ, նոյն իսկ որևէ դժբախտութեան կամ փորձութեան միջոցին ձայն հանել, կամ աղաղակ բարձրացնել անգամ չեն կարող. այլ միայն ձեռքի կամ գլխի հաւանական և բացառական պէսպէս շարժումներով եթէ կարողացաւ միայն հասկացնել իւր միտքը, լաւ, եթէ ոչ՝ թշուառ հարսը իւր երեսը ծածկող թանձր քողի տակից՝ պիտի փսփսայ տան մէջ գտնուող երեխայի ականջին մի որևէ խօսք, իսկ սա էլ իւր թոթով լեզուով պիտի հասկացնէ ընտանիքի ամեն մի իրեն պատահող անդամին։

Ե

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ՆՈՒԽՈՒ ԳԱՒԱՌՈՒՄ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՃԵԼՈՒ ԲՈՒՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՈՒՏԻԱՑՈՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Շաքու (Նուխու) և Շամախու նախկին խաների հարեմների թանկագին զարդերը եղել են Հայերից և Վրացիներից բռնութեամբ խլուած սևաչեայ նորատի մանկահասակ հրաշագեղ Հայուհիներն ու Վրացուհիները։ Այս անտանելի չարի-